

Ե Ր Ա Զ...

Մ. ԵՍԱՑԵԱՆԻ

ԱԷՐ ԿՐՈՎ ԷՐ ՅՆՈՐԹԱՄԻՉ...

Ա. ՇԱՀ-ԱՎՀ

I

Սեպտեմբերի վերջերքն էր, որ Ազիզենց Ֆարսին Բալախանուց վերադարձաւ զիւլլը Վերադարձաւ, շատերի նախանձը շարժեց և շաբերի էլ ախորժակը բացաւ... Նրա կարմիր շալէ արխալուլլը, արծաթէ զօրին, մահուդ չուխէն՝ թեկերի փակը կանաչ կոռոր ձգած, երկարավիզ կօշիկները, կլոր զլիարկը և վերջապէս վիճակախաղում ընկած չուզունէ փոքրիկ ժամացոյցը ում նախանձը չէր շարժել Զանգեզուրում, այն էլ այդպիսի մի ւեր ընկած զիւլում... Խոկ եթէ Դրա վրայ աւելացնենք բերնէ-բերան անցնող, բերած խալաթների և ճոթ ու կորոների պատմութիւնը, ապա սատրիկը կարարեալ կը լինի: Ճիշտ է, շափերն են օպարութիւնից արաքելիս սահնակուները բերել, շափերն են արծաթէ ժամացոյցով ու քամարով զիւլլ վերադարձել ու անմեղ պարանիների ախորժակը զրգուել, բաց Ազիզենց Ֆարսին մի նւրիշ բան է. Նրանից «զլուխ» լարիբաւոր» հազիւթէ զիւլումը սպափառած լինէր. և հենց դա էր սպափառը, որ ողջ զիւլլ մի բերան դարձած, նրա մասին էր խօսում, նրա գովքն անում: Նափերը, նոյն իսկ, իրենց փունն էին շնչրաւիրում և պարմել փալիս Դէսից-Դէնից: Ֆարսին Բալախանին ար վառ գոյներով էր նկարագրում: Նափերը երանի էին փալիս նրա մօրը, որ այդպիսի աշխատաւոր» որշակ ունի:

—Տնւնդ չքանդուի, տղափէր, տղայ է է, աշխարհս հաւաքել

ու իրենց պունն է թափել. ասում էին բարեկամները և հեռանում:

Բայց նվազ էր Ազիզենց ֆարսին: Մի հասարակ «մասլէնչիկ», որ մի քանի տարի շարունակ Բալախանի հոգած կազարմաներում (բանւորանոց) օր ու գիշեր անելով, բանւորութիւնից հասել էր մասլչոնչիկութեան (իւղ քսող) «բարձր ասրիճանին», մի պաշտօն, որին այսօր հազարաւոր ֆարսիներ իրէալ շինած, հասնել են ձգտում: Տարիների չարքաշ աշխատութեամբ ձեռք բերած կոպէկինը, դուն դնալու ժամանակ՝ կերպով ծախսելով, նաև մազի չոփ անգամ չէր շեղւել այն շաւղից, որ տարիներից ի վեր գծել էին զանազան ֆարսիներ... Ուրիշներին զարմացնելու համար արդեօք, թէ հենց իրևնց չարքաշ կեանքից յետոյ մի ըլաւ ապրելու» համար, այդ ոլորմելի արարածները, շատ անգամ, արինով ձեռք բերած մանէթները կոպէկիների փեղ են ծախսում: Հաւանական է, որ հենց ուրիշներին զարմացնելու և շլացնելու համար, մանաւանդ, որ շատերը վերադառնալով օրարութիւնից, անմիջապէս ամսւանանում են, կամ առնւազը նշան են դնում... Այդ շատերից մէկն էլ Ազիզենց ֆարսին էր, որ գիւղում այնքան աղմուկ էր հանել...

Ֆարսու մօր «երջանկութիւնը» հանդիսավոր չէր դալիս գիւղացի մայրերին. ամեն ոք երանի էր դալիս այն օրին, որ կը դեսնեն իրենց որդուն էլ «այն օրին» հասած: Ահա այդպիսի մայրերից մէկն էլ Նիրինենց Սօնան էր, որ իր որդի Սպօփն Բալախանի ճանապարհ դնելիս, եկել էր մինչև գիւղի աղբը ի մօք և անդադար ֆարսուն էր օրինակ բերում՝ խօսելիս:

— Որդիս, ասում էր նա. — թնչ ուզում ես արա, միայն որ գիւղը վերադառնաս, անուններս գերնովը չփառ. մենք էլ մեզ համեմատ գուն ենք. Շոստ ու դիւշմանահի նայիր, «նամուս. զէյրաթ» արա: Օրէնքը այն է, որ դաշն օրարութեան մէջ թնչ էլ որ անէ, հարցնող չի լինելու. միայն թէ վերջը լաւ լինի, որ պարզերես՝ ձնողաց երես դուրս գայ... Մի օր սոված մնալով, մարդ չի մեռնիլ. որ յետ դառնաս դուն, քեզ չեն հարցնելու թէ թնչ ես կերել. ասելու են՝ թնչ ես բերել. գրպանդ են պառելու: Գրպանումդ որ եղաւ, խօսքը քոնն է... Մի խօսքով, այնպէս արա, որ Նիրինենց Աղաջանին գիւղամիջում պարզերես անես...

Այս խօսքերով Սաքօին ճանապարհ Դրին նաւթի քաղաքը:

II

Տասնելից տարեկան Սաքօն իր համագիւղացիների հետ հասաւ Բալբախանի, որոնց միջոցով և պետքերշչիկի պաշտօն սպացաւ, ուրիշ ոչ մի պաշտօն այնքան հեշտ էր ճարւռում... Են, ինչ անենք, մենակ ինքը չէ, իրեն նման հազարները կան. ինչպէս նրանք, այնպէս էլ ինքը: Բայց կազարմաները... Այդ արդէն շար ծանր էր Սաքօի համար: Հարիւրաւոր թուրք ու հայ, կեշփոտ բանւորների հետ պառկել մի մուժ ու խոնաւ նկուղի մէջ, առաջին անգամից սարսափեցրեց նրան: Հէնց ուզում էր, առաջին պատահողի հետ զիւղը փախչի, բայց մէկ էլ որ յիշում էր Ազիզենց ֆարսուն, յետ էր կենում այդ մոքից. մքածում էր. «Խոմ յաւիրենական չէ, որ մարդ չկարողանայ դիմանալ. ժամանակաւոր բան է. մարդու մի որից կախ տալու էլ որ լինին, էլի մի տարի մի տեղ կարող է մնալ: Զէ որ վերջը լաւ կը լինի...»

Վերջը լաւ կը լինի... Ուրիշ խօսքով մի օր՝ իր վերադարձին դիւղում մի քանի մարդկանց պիտի զարմացնէ իր գեղեցիկ շարերով...

Վերջաչու պաշտօնին շուրջ չընսկելացաւ: Մանաւանդ գիշերւայ ծառայութիւնը անփանելի էր. ամեն ինչ կտար, միայն թէ գիշերները հերթ պահել շտային. բայց ում կարող էր յայտնել իր միոքը, և ով կընդունէր «այդպիսի փարօրինակ» խնդիր: Ի՞նչ ասել է լինել «բարբարալցիկ» և կամ վեշերշչիկ... Գիշերցերեկ, չորս հինգ ժամ շարունակ տեղը մեխւած, անթարթ աչքերով և լարւած ուշադրութեամբ նայել նաւթահան թոկին, նոյն իսկ փարիներով ծառայածների համար մի շաբաթ դւեր աշխատութիւն է. ուր մնաց Սաքօի պէս պարապարապ սրբած, անհոգ այծարածի համար, որ սովոր էր օրական հարիւր անդամ ծառերի կապարները բարձրանալ, սար ու ձոր չափչիել իր քէփին: Անը Սաքօն ով, վեշերշչիկութիւնը ով... Զմեռւայ երկար ու ցուրտ գիշերներին նաւթահորերում հերթ պահելը հեշտ բան է Սաքօի, նման, մօր պահած երեխաների համար: Նա մօր սպահած է. ինչ անենք, որ ուրիշների ցաւով փարակւած, ազժմ ընկել է Բալբախանու նաւթի ցեխերի մէջ: Տանը եղած ժամանակը, որ երեկոյեան հանդից վերադառ-

Նում էր, ևարժա չերանում, որ իր փրեխները հանէ ոգներից. քոյ-
բերն էին գալիս իրենց ազիզ ելքօր փրեխները քաշում, ոգները
լւանում և փափուկ անկողնի մէջ դնում: Խոկ մէժմ...

III

Ջմեռւայ գիշեր էր: Յուրին ու խաւարը պատել էր ամենուրէք.
Հանդարտ կերպով տեղում էր ձիւնը և երկիրը ծածկում փափուկ
սաւանով: Ամեն ինչ ընկղմած էր խորին լոռւթեան մէջ. միայն
երբեմն երբեմն լսում էին փորիչ-մեքենաների (հոր փորելու)
խոլ ճռչիւնը: Գիշերացին ացդ պահուն մեքենաներն էին միայն,
որ ուաք-ուաք գոլորշիներ արտադրելով, անընդհար գործունէու-
թեան մէջ էին, որոնց մերթ արագ և մերթ ընդհար ձայները
միախառնւելով գիշերացին սուլիչների ձայների հետ, մի խորհրդա-
ւորութիւն էին փալիս ացդ համափարած լոռւթեանը:

Սաքօն և իր ընկերը կանգնած նաւթահան ճախտրակի մօտ,
կամաց-կամաց նաւթ էին հանում. ըստ երեսյթին շատ յոգնած
էին, որովհետեւ չորս ժամ շարունակ աշխարում էին արդէն: Սա-
ռած ոգները փախտակներից էին կպել, բայց այնուամենայնիւ քուն-
ները փանում էր. որքան աշխարում էին արթուն մնալ, երգում
էին մելամաղձիկ բայաթիներ, սակայն ի զուր. արդէն թուլացել էին:
Մի քաղցր նինջ սկսաւ տիրել նրանց: Ննջում էր Սաքօն և երազ
դիմում:

Հարիւրաւոր խառն ի խուռան փեսարաններ գալիս անցնում էին
աչքի առաջից: Նրան թւում էր, որ ինքը արդէն այլ ևս վերեօր-
շիկ չէ, այլ մի ուրիշ, աւելի բարձր պաշտօնեայ. փող է աշխարել,
հարստացել և գնում է հայրենիք, նոր շորեր է հագել, ճիշու Ազի-
զենց Ֆարսու նման: Կարմիր շալէ արշալուղ, մահուդ չուխա, ար-
ծաթէ քամար, երկարավիզ կօշիկներ...

Արդէն դանն է: Հայրը, մայրը և քոյրերը ու բարեկամները
հաւաքել են և շրջապարել իրեն ժաղփարէմ. շուրջը անբաւ ուրա-
խութիւնն է փիրում. ամենքն էլ խալաթ պիտի աւանան: Հանում է
մօր «մերինոս» արխալուղցուն, հօր «լաստիկ» արխալուղցուն,
քոյրերի կանաչ ձարշաթները, բարեկամների ու ազգականների խո-
լաթները և բաժանում: Ամենքն էլ ու բախ են, ամենքն էլ շնոր-

հակալ... Աչքալուսանքի եկածները թէյ են խմում և ուրախուրախ խօսում. Դրանց մէջ է նոյն իսկ Ազիզենց Ֆարսին, որ եկել էր Բաղախանուց գեղեկութիւն հարցնելու Ֆարսուն վեսնելուն պէս նա ժաղացէմ հարցնում է.

— Ա՛ Ֆարս, քէփդ հալդ, ի՞նչպէս ես:

— Քէֆս իսարաբ է, զիւղում օրը լաւ չի անցնում: Ուրիշ բան էր Բալախանումը...

Թրը'իսկ. Սաքօն սարսափած բացաւ աչքերը: «Ժալոնկան» (նաւթահան ցիլինդր) բարձրացել էր նորից ու ամբողջ բուրգը Դըլըրդեցնելով, ուժով կտել էր վերեին: Ժալոնկայի Դըլըրդից էլ վրայ հասաւ քացիսած գործակափարը — մի պինդ ասպարկ նախ Սաքօին և ապա ընկերոջը:

Է՛, ասպարկը ոչինչ, բայց որ մի մանէթի շփրափ (փուգանք էին դրելու:

«Գիւղում օրը լաւ չի անցնում: Ուրիշ բան էր Բալախանումը». Հնչում էր Դիո Սաքօյի ասպարկից խժժացող ականջին: